

Գևորգ Ս. Ստեփանյան
պատմ. գիտ. դոկտոր

ՇԱՄԱԽԻՆ ԵՎ ՇԱՄԱԽԱՀԱՅԵՐԸ
(հնագույն ժամանակներից մինչև 20-րդ դարի վերջերը)*



Շամախին՝ դարեր շարունակ գոյատևած հարուստ ու ինքնատիպ Հայոց ուստանը, հնագույն ժամանակներից ունեցել է ստվարաթիվ հայ բնակչություն, որը ժամանակի ընթացքում ստեղծել է ահռելի հարստություն և մշակույթի անկրկնելի կոթողներ:

Տարիներ շարունակ աղբրեջանական պատմագրությունը (Չ. Բունիաթով¹, Ֆ.

* Ներկայումս, երբ ժողովրդագրական քաղաքականությունը (դեմոպոլիտիկա) սկսում է դիտվել իբրև 21-րդ դարի աշխարհաքաղաքականություն, ժամանակն է, որպեսզի ամբողջական գիտական հայացք նետենք վերջին հարյուրամյակում Հայաստանում ու նրա շուրջը մեր ժողովրդի կորցրած կամ էլ կորստյան եզրին գտնվող ժողովուրդ **ուստանների** պատմությանը: Դա անհրաժեշտ է ոչ միայն մեզ բաժին ընկած ողբերգության մեծությունը գիտակցելու, այլև դրա պատճառները վեր հանելու համար: «Վեմ»-ը իր «Ժողովրդագրություն» խորագրի միջոցով անդրադառնալու է Հայաստանի ու հարակից երկրների ժողովրդագրության հիմնահարցերին՝ սկսելով արդեն հայագուրկ կամ հայագրկման գործընթացի մեջ գտնվող քաղաքների ու գավառների պատմական ժողովրդագրությունից: Ուսումնասիրությունների շարքը ներառելու է Հայոց բնապատմական միջավայրի հյուսիսարևելյան վերջնակետից՝ Կասպից ծովի ափերից, մինչև Հայկական Կիլիկիան հասնող մեր ավեր կամ մարող բնակավայրերի ժողովրդագրությունը: Հարուստ ու շքեղ Շամախի հայաքաղաքին նվիրված ներկա հրապարակմանը «Վեմ»-ի հաջորդ համարներում կհետևի Բաքվի, Գանձակի և ապա Վրաստանի հայաշատ բնակավայրերի և շրջանների հայության պատմությունը: Խմբ.:

Հոդվածն ընդունվել է տպագրության 12. 09. 2009:

¹ Տե՛ս Бунятов З., Азербайджан в VII-IX вв., Баку, 1965.

Մամեդովա² Հ. Ջիդդի³ և շատ ուրիշներ) հետևողականորեն քողարկել է Շամախի քաղաքում հնուց ի վեր, ինչպես նաև 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին ստվարաթիվ հայության գոյության փաստը: Միտումնավոր կերպով լռության քողով է պատվել, կամ էլ ծայրահեղ դեպքում խիստ նվազեցվել է այդ քաղաքի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում, առևտրական հարաբերություններում ու կառուցապատման գործում հայերի ունեցած ծանրակշիռ ներդրումը:

11-րդ դարից սկսած՝ Կուրից մինչև Կասպից ծով ընկած տարածքները սկզբնաղբյուրներում առավելապես հայտնի են Շիրվան կամ «Շարուանայ-Շիրուանայ» երկիր անուններով⁴: Մ. Չամչյանն այդ մասին գրում է. «Աղուանից աշխարհ, որ է ընդ մեջ Կուր գետոյ և Կասպից ծովու՝ մինչև ի Դարբանդ. և սա կոչի Աղուանք Շիրուանայ, կամ Շիրուան...»⁵: Շիրվանի կենտրոնն էր Բուն Աղվանքի Ճիդրերի երկրի Յրի մեծ քաղաքի ավերակների տեղում կառուցված⁶, տարանցիկ առևտրական ճանապարհների վրա գտնվող Շամախի քաղաքը⁷, որը կատարում էր Բուն Աղվանքի բազավորության հնագույն մայրաքաղաք Կասպաղակի (հունահռոմեական աղբյուրներում «Կաբալակա») դերը:

Պատմության մեջ բազմիցս հիշատակվող հինավուրց Շամախի քաղաքը տարածված էր Կովկասյան լեռնապարի հարավարևելյան ճյուղերի ստորոտին, փոքրիկ բլրաշարի վրա՝ փռված Սբ. Սահակ և Չազալավա գետակների խառնվելու տեղում⁸: Քաղաքին ամենամոտիկ լեռներն էին դեպի հյուսիս-արևմուտք ձգվող Գզդարասին և Փեղրաքունը⁹: Շամախիի մեծ գավակ Ալ. Շիրվանգաղեն գնալանքով է նկարագրել իր ծննդավայրի բնությունը. «Այնտեղ երկինքը կապոյտ է, ինչպես Փիրուգա, երկիրը բոյսերով, ծաղիկներով փարթամ, ինչպես մի սքանչելի պարտեզ: Այնտեղ ձմեռը եղանակը մեղմ է, դիրեկան, ոչ քամի, ոչ փոթորիկ: Իսկ գարնանը և ամռանը բարձրագագաթ ծառերի վրայ գիշեր-ցերեկ երգում են անթի սոխակներ: Եւ ինչ համեղ մրգեր կան այնտեղ, եթէ գիտենաք, ինչ հոտաւետ պտուղներ»¹⁰:

Պատմական հիշատակությունները վկայում են, որ Բուն Աղվանքի տարածքում վաղնջական ժամանակներից սկսած բնակվել է հայկական որոշակի էթնիկ տարր, որն իր ուրույն տեղն ու դերն է ունեցել երկրամասի էթնոքաղաքական և էթնոնշակութային գործընթացներում¹¹: 10-րդ դարի վերջի հայ պատմիչ Մովսես

2 Տե՛ս Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н.э.-VIII в.н.э.), Баку, 1986; Кавказская Албания и албанцы, Баку, 2005.

3 Տե՛ս Джидди Г., Средневековый город Шемаха (IX-XVII века). Историко-археологическое исследование, Баку, 1981.

4 Տե՛ս Փափազյան Հ., Անանուհի Տաջիկ աշխարհագիրը Հայաստանի և Արևելյան Կրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (X դ.), «Տեղեկագիր» ՀԱՄԻ ԳԱ (հաս. գիտ.), Եր., 1953, N 5, էջ 80-86):

5 Չամչյանց Մ., Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), Կ. Գ. Երևան, 1984, էջ 131:

6 Տե՛ս Հարությունյան Բ., Լիփնիքի տեղադրության հարցի շուրջը, Բե՛հ, Եր., 1981, N 1, էջ 123, տե՛ս նաև Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987, стр. 88.

7 Տե՛ս Минорский В., История Ширвана и Дербенда X-XI веков, Москва, 1963, стр. 38

8 Հարուստ ավանդաբանությունն ունենալու շնորհիվ Շամախին դարձել է նաև հայ և օտարազգի ստեղծագործողների ոգեշնչման աղբյուրը: Օրինակ՝ ռուս մեծ բանաստեղծ Ա. Պուշկինի «Յեթիսը ոսկե արաղողի մասին» վիպերգի հերոսուհին էր չքնաղ «շամախեցի թագուհին» (Пушкин А., Сказки, Москва, 1989)

9 Տե՛ս Հ. Ղ., Ամանկ Շամախուց, «Մշակ», Թիֆլիս, 1872, հուլիսի 20, N 28:

10 Շիրվանգաղե Ալ., Իմ կեանքից, «Հասկեր», Թիֆլիս, 1910, N 11, էջ 320- 321:

11 Տե՛ս Гагемейстер Ю., Хозяйственный очерк Закавказского края (народонаселение). Сборник газеты Кавказь, Тифлис, 1847, стр. 58, տե՛ս նաև Экономический бытъ государственных крестьянь Геокчайскаго и Шемахинскаго уездовъ Бакинской губернии, исследование Н. А. Абелова, §Материалы для изучения экономического быта государственныхъ крестьянь Закавказскаго края: (այսուհետ՝ МИЭБГКЗК), т. VI, ч. II, Тифлис, 1887, стр. 12, տե՛ս նաև Գալստյան Հ., Հակոբյան Ա., էթնակեզական գործընթացները Բուն Աղվանքում (Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ, Եր., 2002, էջ 90, տե՛ս նաև Հակոբյան Ա., Արևելյան Այրկովկասում հայկական և իրանական էթնոնշակութային ներդրումների շուրջ (Մի խմբի ձևավորման օրինակով), «Մերձավոր Արևելք», պր. Ա, Եր., 2002, էջ 31-39:

Դասխտության (մատենագրության և պատմագրության մեջ կոչվել է նաև Կաղանկատվացի) «Պատմութիւն Աղուանից» երկում առկա՝ 6-րդ դարի սկզբում ստեղծված «Վաչագանի վեպից» քաղված տեղեկությունները վկայում են, որ դեռևս 4-րդ դարի 30-ական թթ. սկզբներին Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիս եպիսկոպոսը Բուն Աղվանքում լուսավորական գործունեության ժամանակ, Յրիում հիմնել էր եկեղեցի և այնտեղ տեղադրել Սբ. Չաքարիայի և Սբ. Պանդալեոնի մատուռների մի մասը. «Եւ տարեալ զամենասուրբ նշխարս վկայիցն ի մեծ քաղաքն Յրի Աղուանից իշխանութեանն՝ շինեք փոքրիկ եկեղեցի և դնեք անդ մեծ զգուշութեամբ մասն ինչ յարեւնէն Չաքարիայ և ի նշխարաց սրբոյն Պանդալիոնի...»¹²: Երկրամասում հայ էթնիկ տարրի վաղեմությունը փաստող ապացույցներից խիստ բնորոշ է Սարգիս արք. Ջալալյանցի վկայակոչումը. «Այստքիկ գիւղօրայք հին են, և բնակիչքն (իմա՝ հայերը - Գ. Ս.) բնիկ շամախեցիք...»¹³: Հարցի վրա լույս է սփռում նաև Ներսես Աբեղյանի ուսումնասիրությունում տեղ գտած տեղեկատվությունը. «Հայերը համարվում են Շիրվանի հին բնակիչների մի մասը: Նրանց այստեղ հայտնվելու ժամանակը վերաբերում է եթե ոչ 10-11-րդ դարերին, ապա ամենայն հավանականությամբ շատ ավելի վաղ ժամանակների»¹⁴: Համաձայն կովկասագետ Ն. Ջեյդլիցի վկայության՝ «Շամախի քաղաքի շրջակայքում սփռված հայկական բնակավայրերը ամենայն հավանականությամբ կազմում են միջին դարերում առավել մեծ քանակությամբ եղած բնակավայրերի մնացորդները»¹⁵:

Բացի հնաբնակ հայերից, Շիրվանում և Շամախիում հայ բնակչության հաստատումը շարունակվել է սելջուկ-թուրքերի և մոնղոլ-թաթարների արշավանքների հետևանքով Հայաստանից տեղի ունեցած արտագաղթերի ժամանակ: Սելջուկ-թուրքերից հալածված Անիի հայ բնակչության մի ստվար զանգված Կասպյան ուղիներով հեռացել և հաստատվել է Մերձվոլգյան շրջաններում՝ Աստրախան, Սարայ, Կազան, իսկ մոնղոլ-թաթարների կողմից Անիի գրավումից հետո, նույն ճանապարհով անեցիների մեկ այլ հատված հաստատվել է Վոլգյան Բուլղարիայում¹⁶: «Այս մեծ աղետն փրկուած Հայեր, գրում է Ա. Ալպոյաճյանը, - ինչպէս Հայաստանի ուրիշ գաւառներու բնակիչներէն մօտ 40,000 անձ, մայր երկրէն կը փոխադրուին և կը հաստատուին Կովկասեան լեռներու հիւսիսային կողմը...»¹⁷: Անիից դեպի հյուսիս գնացող գաղթականության՝ Կասպից ծովի արևմտյան ափագծի երկարությամբ սփռվելու մասին ուշագրավ տեղեկություն է պարունակում 17-րդ դարի տաղասաց Սարտիրոս Դրիմեցու «Պատմութիւն Դրիմայ երկրի» չափածո աշխատությունը, որտեղ ասվում է, որ Ջուղա, Վան և այլ վայրեր գաղթելուց բացի, անեցիների մի մասը «անցանեն ընդ

12 Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից Աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Եր., 1983, էջ 37, տես նաև Յակոբեան Ա., «Վաչագանի վեպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Ձ դարերի Աղուանքում, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2004, 6-րդ տարի, էջ 45-142, տես նաև նույնի՝ Աղուանքում Արշակունեաց թագաւորութեան անկման ժամանակի մասին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», պր. XXVI, Եր., 2007, էջ 72-88:

13 Ջալալեանց Ա., ճանապարհորդութիւն ի Մեծն Յայաստան, մասն Բ, Տփլիսի, 1858, էջ 394:

14 Абе́лов Н. А., նշվ. աշխ., МИЭБГКЗК, стр. 12

15 Списки населенных мест Российской империи по Кавказскому краю, LXV, Бакинская губерния. Список населенных мест по сведениям 1859 по 1864 год. Сост. глав. ред. ком. Н. Зейдлицием, Тифлиси, 1870 (այսուհետ՝ СНМ-1859-1864), стр. 93

16 Տես Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթականության պատմության, հ. Ա, Եր., 1964, էջ 123-124, տես նաև Յակոբյան Ա., Թաթարսու հայերի լեզվական նշակույթի շուրջ (18-րդ դ.-20-րդ դ. սկիզբ), «Եջմիածին», 2002, սեպտեմբեր, էջ 72:

17 Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրե, 1955, էջ 350:

ծովամբն Կասպիական»¹⁸: Պատմական աղբատիկ աղբյուրները լրացնելու է գալիս ազգային գործիչներից Հովակ Ստեփանյանի հետևյալ տեղեկությունը. «Արմալիր, Դվար, Սոգրոկ, Վլադիկակակազ, Գրոզնի, Պետադիգորսկ, Կիսլավոդսկ, Դերբենտ, Պետրովսկ, Դուբա, ապա Բագու, Շամախի, Նուխի եւ այլ տեղերում ապրում են տասնեակ հազարաւոր հայեր, որոնք դարերի ընթացքում արտագաղթի են ենթարկուել քաղաքական եւ տնտեսական պատճառներով Անիի շրջանից»¹⁹:

Աղբյուրները վկայում են, որ Շամախիի հայ բնակչությունը ուսումնակրթական սերտ կապեր է ունեցել Սյունյաց մետրոպոլիտական Աբոռի հետ: Ձեռագիր հիշատակարանի վկայության համաձայն՝ Հովհան Որոտնեցու մահվանից հետո (1382), երբ Տաթևի համալսարանը գլխավորում էր նրա աշակերտ Գրիգոր Տաթևացին (1346-1411), Ջուղայից, Թավրիզից, Սյունիքից և այլ վայրերից ուսանելու եկած 12 աշակերտներից մեկը, որի անունն էր Հունան, Շամախիից էր: Ձեռագիր հիշատակարանում ասվում է. «Այլ մեք դարձցուք ի վեր ի մեծ Գրիգոր Տաթևացին, որ ի վրդովմաց վերին աշխարհին առեալ զաշակերտս իւր ԲԺ (12)-ան...որ էին վարդապետք՝ Մխիթար Տաթևու, Յովհաննես ի վանիցն Հերմոնի, Գալուստ ի Վաղընդեցու, Յունան ի Շամախու...»²⁰: Այս վկայությունը մեկ այլ խմբագրությամբ տեղ է գտել նաև «Հայսմավորքում», որտեղ Գրիգոր Տաթևացու և նրա աշակերտ Հունանի մասին ասվում է. «Եւ ուներ ժողովեալ բազում աշակերտս՝ որոյնն Ջունան ի Շամախու»²¹: Այն, որ դեռևս միջնադարից Շամախին համարվել է Արևելյան Այսրկովկասի հայության կրթական, մշակութային կյանքի և վաճառականության հիմնական կենտրոնը, հաստատում են նաև եվրոպացի մի շարք ճանապարհորդներ: Այս առումով ուշագրավ տեղեկություն է հաղորդում 15-րդ դարի երկրորդ կեսի իտալացի դիվանագետ, ճանապարհորդ ու վաճառական Ջոզեֆո Բարբարոն, որը 1471-1473 թթ. եղել է Վենետիկի դեսպանը Ակ-կոյունլու Ուզուն-Հասանի արքունիքում: Վենետիկ վերադառնալու ճանապարհին Բարբարոն Թավրիզից հետո լինում է նաև Շամախիում և Դերբենդում: Եկարագրելով Շամախի քաղաքը՝ նա գրում է. «Գտնվում է դեպի Բագվի ծովը վեց օրվան ճանապարհի հեռու... Այս շատ լավ քաղաք է, ունի չորս հազարից հինգ հազար տուն եւ շինում է մետաքս, կտավ եւ ուրիշ բաներ իրենց եղանակով: Գտնվում է Մեծ Հայաստանում²², եւ բնակիչների մեծ մասը հայ են»²³: Հարցի վերաբերյալ պատկերացում տալու համար նշենք նաև անգլիացի ճանապարհորդ ու վաճառական Էնթոնի Ջենքինսոնի (1559-1572) Շամախիում 1563 թ. ապրիլի 10-ին եղած ժամանակ կատարած գրառումներից հետևյալ հատվածը. «...այս քաղաքը (Շամախի -Գ. Ս.) ծովից ուղտով յոթը օրվան ճանապարհի հեռու է, բայց հիմա շատ ավերակ է, բնակեցված գլխավորապես հայերով...(ընդգծումը մերն է -Գ.Ս.)»²⁴: Շամախի քաղաքի էթնիկական և դավանական կազմի մասին ուշագրավ հիշատակություն է թողել նաև 1686 թ. այնտեղ այցելած ֆրանսիացի Ֆիլիպ Ավրիլին: Ըստ նրա՝ մոտ 50-60 հազարանոց բնակչություն ունեցող Շամախիում «Բացի հայերի մեծ թուից, որ կարելի է հասցնել 30.000-ի, կան նաև հնդիկներ, մուսկովիտներ, վրացիներ, յոյներ, թուրքեր,

18 Մարտիրոսյան Ա., Մարտիրոս Դրիմեցի (ուսումնասիրություն և բնագիր), Եր., 1958, էջ 145:

19 Ստեփանեան Յ., Սօտիկ անցեալէն, «Հայրենիք», Պոսթըն, 1964, ԽԲ տարի, մայիս, N 5, էջ 45:

20 Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. Բ, կազմեց՝ Վ. Հակոբյան, Եր., 1956, էջ 152:

21 Գիրք որ կոչի Յայսմաւորք, ապրիլի ԻԷ, Կ. Պոլիս, 1730:

22 Ենթադրելի է, որ Ջ. Բարբարոյին շփոթեցրել է Շամախի քաղաքում սովոր հայության առկայության հանգամանքը, ուստի քաղաքը ներկայացրել է Մեծ Հայքում:

23 Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ: Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, հ. Ա, ԺԳ-ԺԶ դարեր, Եր., 1932, էջ 199:

24 Նույն տեղում, էջ 372:

չերքեզներ եւ բազմաթիվ այլ ժողովուրդներ...»²⁵: Ինչպէս տեսնում ենք, հայերը կազմում էին քաղաքի խառը բնակչության կեսը և ամենակարևորը՝ համարվում էին հիմնական բնակիչները: Ավելին, Շամախիի հայ առևտրականներին էր պատկանում Շամախու հում մետաքսի արտահանման առաջնությունը²⁶, որը վաճառահանվում էր Եվրոպա, Միջին Ասիա, Հալեպ, Պարսկաստան և Արևելյան երկրներ²⁷:

Շամախի քաղաքի՝ 17-րդ դարի սկզբների հայապատկան քարավանատան վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է թողել ռուս վաճառական Ֆեոդոր Կոտովը, որը, երկարամյա շփումներ ունենալով հայերի հետ, սովորել էր նաև հայոց լեզուն: 1623 թ. Պարսկաստան մեկնելու ճանապարհին հանգրվանելով Շամախիում, նա իր ճամփորդական նոթերում գրել է. «Շամախին կառուցված է քարձր լեռների միջև՝ թեքության վրա, բերդը քարից է, բնակավայրն էլ է քարից... Եվ բնակավայրը, և կրպակների շարքը, և քարավանատները կառուցված են բերդից դուրս: Շամախիում կան յոթ քարավանատներ, բոլորն էլ կառուցված են քարից և գտնվում են կրպակների շարքերի միջև. կան տաճկական, հայկական, ուր առևտուր են անում նաև ռուսները,-լեզգիների, գիլանցիների և այլ քարավանատներ, և քաղաքն ընդարձակ է»²⁸:

Շամախահայերի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է թողել Պարսկաստան ուղևորվելու ճանապարհին 1636 թ. դեկտեմբերի 30-ից մինչև 1637 թ. մարտի 27-ը Շամախիում հանգրվանած Սաքսոնիայի թագավոր Ֆրիդրիխ Շլեզվիգ-Հոլշտինացու դեսպանության քարտուղար Ադամ Օլեարիուսը: Նա գրում է, որ Շամախիում եղած ժամանակ խանը իրենց ցուցադրել է ավելի քան 2000 մարդուց բաղկացած իր հետևակը, որի մեծագույն մասը հայեր էին²⁹:

17-րդ դարի 40-ական թթ. սկզբներին Շամախի այցելած թուրք ուղեգիր Էվլիյա Չելեբին իր «Ուղեգրության» մեջ գրում է, որ քաղաքն ունեցել է 7000 բարեգարդ տուն, անթիվ այգիներ ու պարտեզներ, 26 թաղամաս, 44 քարավանատներ, մոտ 200 խանութներ և սրճարաններ³⁰: Այն, որ 17-րդ դարում Շամախին խիստ աճել և այն ժամանակվա մասշտաբով արհեստների և առևտրի խոշոր կենտրոն էր դարձել, ցույց է տալիս թեկուզև ժամանակագրի մոտ պահպանված հիշատակումը 1668 թ. տեղի ունեցած երկրաշարժի մասին: Չաքարիա Ագուլեցու վկայությամբ՝ երկրաշարժի հետևանքով զոհվել էր 7-8000 մարդ³¹: Ենթադրենք, որ այդ թիվը խիստ չափազանցված է, բայց եթե նույնիսկ մի քանի անգամ կրճատելու լինենք այն, նկատի ունենալով, որ երկրաշարժից ամբողջ ազգաբնակչությունը չի

25 Թաջիրեան Է., Կոռնեյ լը Բրիւնի «Ուղեգրութիւնը» որպէս հայ գաղթօջայիների պատմութեան ուսումնասիրման աղբիւր (էջեր հայ գաղթավայրերի պատմութեան: Խմբ. Վ. Բարխուդարեանի և Ջ. Եկաւեանի, Երեւան, 1996, էջ 126):

26 Շիրվանի մետաքսից գործած գլխաշորերի և քարավանների մասին հիշատակումներ են պահպանվել նաև հայկական հնագույն ժողովրդական երգերում: Ինչպէս օրինակ՝ «Լուսնյակն ինձի ցերեկ, Շիրվանի աղլուխ կամ քարվան բերեք» (Фитуня А., История последней столицы Ширвана (историко-этнографический очерк), Известия Азербайджанского комитета охраны памятников старины, искусства и природы, вып. 3, Баку, 1927, стр. 141):

27 Տե՛ս Գալորյան Գովհ., Ուղեգրություններ, հ. Ա, էջ 412:

28 Путешественники об Азербайджане, под редакцией Э. Шахмалиева, т. I, составил З. Ямпольский, Баку, 1961, стр. 225, տե՛ս նաև Խաչիկյան Լ., Գայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա, Բանբեր Մատենադարանի, Եր., 1980, N 13, էջ 90:

29 Տե՛ս Подобное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633,1636 и 1639 годах, составленное секретарем посольства Адамом Олеарием, Москва, 1870, стр. 526:

30 Տե՛ս Օտար աղբյուրները Գայաստանի և հայերի մասին, 4, Թուրքական աղբյուրներ, 9, Էվլիյա Չելեբի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ա. Սաֆրաստյանի, Երևան, 1967, էջ 93-94:

31 Տե՛ս Չաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938, էջ 74:

կոտորվել, այնուամենայնիվ պետք է խոստովանել, որ Շամախին խոշոր քաղաք է եղել:

18-րդ դարի առաջին տասնամյակների ընթացքում Շիրվանը և Շամախին մեծապես տուժեցին Դաղստանի լեռնաբնակ սուննի լեզգիների ասպատակություններից, որոնք ուղեկցվում էին հազարավոր մարդկանց գերեվարումով: Լեզգիների 1712, 1716, 1720, 1721 թվականների արշավանքների ընթացքում Շաքիի և Շամախու շրջանների հայաբնակ գյուղերը ենթարկվեցին համատարած ասպատակության. կողոպտվեց և գերեվարվեց անպաշտպան բնակչությունը³²: Վերջին արշավանքի ժամանակ կոտորածից և գերեվարությունից մասամբ փրկվեց Շամախի քաղաքի և հարակից հայկական գյուղերի հայ բնակչությունը: Եսայի Հասան-Ջալալյանցի վկայությամբ. «Իսկ հայ ազգ քրիստոնեայքն թէ՛ բնիկ քաղաքին, և թէ այլ գիւղօրեից ոչ այնքան վնասեցան կոտորմամբ, այլ սակաւ ոմանք. զի խնայեցին ի նոսա ողորմութեամբն Քրիստոսի. այլ աւարումն ընչիցն ոչ սակաւ եղել, նաև գերեվարութիւն զաւակաց և որդւոց նոցա ոչ էսս եղել»³³:

Լեզգիների հերթական ասպատակությունները Շամախու, Շաքիի և Ղուբայի գավառների անպաշտպան մնացած հայերի և ուղիների բնակավայրերում կրկնվեցին 1724 թ.: Այդ ավերիչ արշավանքի մասին պահպանված վավերագիրը վկայում է. «... Վայ մեզ, վայ մեր Հայոց գլխին, որ վասն մեր մեղաց Աստուած բարկացել է մեզ վերայ որ փուչանանք. առաջ Շամախին դասանին ժողօուրդ չափմիշ արարին. Ղափալաւ ԼԷ (37) գեղ չափմիշ արարին. Ղարասուվի գեղերանք թուրքացրին. Շաքուայ երկրի գեղերանք ևս թուրքացրին. Ղարապաղու երկիր ամէն չափմիշ արին...»³⁴:

18-րդ դարում լեզգիների ավերիչ ասպատակությունների հետևանքով Շաքին, Շամախին և հարակից գավառների հայկական և ուղիական բազմաթիվ գյուղերը դարձան սակավամարդ կամ ամբողջովին դատարկվեցին: Ռուսական բանակի սպա Հովհան-Գուստավ Գերբերը գրում է, որ լեզգիները ոչ միայն ավերել էին հայկական գյուղերը, այլև երեխաներին և կանանց գերել ու վաճառքի էին տարել³⁵: Մեկ այլ հեղինակ՝ պրուսացի ազգագրագետ և ճանապարհորդ բարոն Ավգուստ Ֆոն Հաքստհաուզենը ավելի ուշ՝ 1843 թ. երկրամասում ճանապարհորդելու ժամանակ գրել է. «... Բոզ-դաղի լեռնաշղթայի ամբողջ գծով և Շամախու լեռնային շրջաններում տարածված են հայկական բնակավայրերը: Բոզ-դաղում և Շաքիի պրովինցիայում, սկսած Նուխիից մինչև Չատմաս (Խաչմաս -Գ. Ս.), ճանապարհորդը ամենուր հանդիպում է քանդված ու կիսաքանդ քրիստոնեական եկեղեցիների ու վանքերի ավերակներ, որոնք նախկինում պատկանել են ու պատկանում են հայերին»³⁶:

Պարսից տիրապետության շրջանում (16-18-րդ դդ.) Շամախիի հայ բնակչությունը ենթարկվել է ոչ միայն տնտեսական ճնշման, այլև ազգային և կրոնական հալածանքների: Այրուհանդերձ, Շամախիի ու շրջակա գյուղերի հայ բնակչության հիմնական զանգվածը, կրելով ամեն տեսակ զրկանքներ, պահպանեց իր ազգային ինքնությունն ու կրոնը՝ ազգային կյանքում առաջնորդ-

32 Տես Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 31:
 33 Նոյն տեղում, էջ 33:
 34 Эзов Г., Сношения Петра Великого с армянским народом (документы), СПб., 1898, стр. 416.
 35 Տես Гербер И., Описание стран и народов вдоль западного берега каспийского моря. 1728 г. (История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. (архивные материалы), под редакцией М. О. Косвена и Х. М. Хашаева, Москва, 1958 (այսուհետ՝ ИГЭД), стр. 116.
 36 Закавказский край, Заметки о семейной и общественной жизни об отношении между Чернымь и Каспийскимь морями. Путевые впечатления и воспоминания Барона Августа фонь-Гакстгаузена, ч. II, СПб., 1857, стр. 208-209.

վելով հայ եկեղեցու կանոններով: Ինչպես նշում էր Հովհան-Գուստավ Գերբերը՝ հայերն ապրում էին քրիստոնեական օրենքներով³⁷:

Շիրվանի հայությանը մեծ գրկանքներ պատճառեցին նաև Պարսկաստանի Նադիր շահի արշավանքները: Թուրքական նվաճումներին դիմագրավելու նպատակով Նադիրը 1734 թ. մայիսին Մուղանի վրայով շարժվում է Շամախի, հիմնովին ավերում ու հրդեհում այն և մեծ թվով գերիներ վերցնում քրիստոնյաներից³⁸: Շամախին ավերելուց հետո Նադիր շահը կենդանի մնացածներին վերաբնակեցրեց հին Շամախուց հարավ-արևմուտք, 26 կմ հեռավորության վրա, Աղսուի մոտակայքում: Նոր բնակավայրը ևս ստացավ Շամախի անունը³⁹: Թե՛ բնակլիմայական պայմաններով և թե՛ ապահովության առումով նոր բնակատեղին բավական աննպատակահարմար էր շամախահայերի համար: Աբրահամ Գ. Կրետացի պատմագիր-կաթողիկոսը հաղորդում է. «Այլ և վասն բնակութեան, զի զՇամախին աւերեալ էր և քակեալ Վախինամաքն, յորժամ էա՞մ յառաջ քան զգալն ի Կէնճէ, և Ը. ժամու ճանապարհի հեռու ի Շամախուցն՝ հողէ բերդ մի շինեալ՝ հրամայեաց զմնացեալ Շամախեցիքն անդ բնակեցուցանել. և զի էր օդն ապականեալ, և տեղն շողային, և ջուրն պակաս, և տաճկունք՝ որք են Լազկիք եւ Սուննիք՝ վշտացուցանէին և գտառապեցուցանէին զԼճզն մեր⁴⁰»: Աբրահամ Կրետացին, որը շրջահայաց քաղաքականությամբ հաջողել էր Նադիր շահի հետ հաստատել վստահելի կապեր, թույլտվություն է ստանում ավերակ Շամախու մոտ՝ Գյուլիստան բերդից մեկ ժամվա ճանապարհի հեռու, նոր բնակավայր հիմնել. «...խնդրեցի ի նմանէ՝ տալ հրաման Շամախեցի Հայոց արտաքոյ նոր շինած բերդին՝ ժամու մի ճանապարհի հեռի ի բերդէն ի տեղի մի վայելուչ՝ գոր նոքա խնդրեցին, շինեսցեն վասն իրեանց բնակութեան...»⁴¹: Շահը հարգում է կաթողիկոսի խնդրանքը և թույլ է տալիս հայերին՝ վերաբնակվելու նշված վայրում: Նոր Շամախիում հաստատված հայերը հին Շամախի կարողացան վերադառնալ միայն Նադիր շահի մահվանից երեք տարի անց՝ 1750 թ.:

Պատմական հիշատակությունները վկայում են, որ տարբեր ժամանակներում, տնտեսական, ռազմաքաղաքական ու այլ շարժառիթների բերումով, շամախահայերի մի մասը, որոնց մեջ գերակշռում էին առևտրականները, թողել են հայրենի երկիրը և հանգրվան գտել մոտ և հեռավոր երկրներում: 18-րդ դարի առաջին կեսին շամախահայերի մի հատված հաստատվեց Ռուսաստանի հայկական ամենահին գաղթօջախներից մեկում՝ Աստրախանում: 1747 թ. պետական-պաշտոնական վիճակագրության տվյալներով՝ 1730-1740-ական թթ. Շամախուց Աստրախան բնակություն են հաստատել 40 հոգի (արական սեռի)⁴²: Հետագա շրջանում Աստրախան են տեղափոխվում ևս 10 հոգի⁴³: Շամախիից Աստրախանում հաստատված հայ վաճառականների մեջ ամենից ավելի աչքի ընկնող դեմքերից էր 1746 թ. տեղափոխված և 1747 թ. ռուսական հպատակություն

37 Տե՛ս Երբեր Ի. Գ., նշվ. աշխ., ԻԳՅԸ, ստր. 116.

38 Տե՛ս Աբրահամ կաթողիկոսի Կրետացույ Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նարո շահին պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 65 (այսուհետ՝ Աբրահամ Կրետացի):

39 Տե՛ս Արուբա Մ., Աշրաֆյան Կ., Государство Надир-Шаха Афшара. Очерки общественных отношений в Иране 30-40-х годов XVIII века), Москва, 1958, ստր. 187.

40 Աբրահամ Կրետացի, էջ 65-66:

41 Նույն տեղում:

42 Տե՛ս Յուխտ Ա., Աստրախանի հայկական գաղութի բնակչության սոցիալական կազմը XVIII դարի առաջին կեսում, «Տեղեկագիր», ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Եր., 1957, N 7, էջ 56, տե՛ս նաև Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 373:

43 Տե՛ս Կաչատրյան Բ., Население армянской колонии в Астрахани во второй половине XVIII века, «Տեղեկագիր», ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Եր., 1965, N 7, էջ 79:

ընդունած Սերգեյ Հովհաննիսյանը (Իվանով), որը համարվում էր գործվածքային խոշոր ֆաբրիկատերերից մեկը⁴⁴: Վերջինիս պատկանում էր նաև քաղաքի ամենամեծ արհեստանոցներից մեկը⁴⁵: Շամախահայերը Աստրախանում հիմնականում զբաղվում էին արհեստով և հատկապես առևտրով:

Շամախիի հայությունը մեծապես տուժեց նաև Պարսկաստանի Աղա Մուհամմադ խանի 1795 թ. արշավանքի հետևանքով: Թիֆլիսն ավերելուց հետո, երբ նա ձմեռելու վերադարձավ Մուղանի դաշտ, զգալի ավերածությունների ենթարկեց նաև Շիրվանը: Վավերագրի վկայությամբ. «Ի բանակիլ Մուհամադ շահին ի Մուղան, տարածեաց զձեռն իւր ի վերա Շամախու և Նուխուայ՝ որ ասի Շաքի Շիրուան...: Ապա սփռեալ ի գիւղօրայս նոցա այրեցին զամենայն շինուածս...»⁴⁶:

Շամախիի ազգաբնակչությունը, այդ թվում նաև հայերը, նոր փորձության ենթարկվեցին, երբ Շամախու Մուստաֆա խանը (1779-1820) իբր թե, ժուսներից ապահով մնալու նպատակով, 1810թ. բնակչությանը հին Շամախուց տեղափոխեց 40 վերստ հյուսիս-արևմուտք գտնվող⁴⁷ Ֆիթ լեռան ստորոտ և մի տափարակ վայրում հիմնադրեց Ֆիթ կամ Ֆիթղաղ քաղաքը⁴⁸: Նոր վայր տեղափոխվածների ընդհանուր թիվը կազմում էր ավելի քան 1000 տուն⁴⁹: Տարաբախտ հայերը այստեղ բնակվում են մինչև ռուսների կողմից Շամախու վերջնական գրավումը (1805) և խանի Պարսկաստան փախչելը (1818)⁵⁰:

Տեղաբնակ հայերից գատ, 19-րդ դարի սկզբներին Շամախիում բնակություն է հաստատում նաև Չմյուռնիայից գաղթած հայության մի հատված: Շամախիում և նրա շրջակայքում զմյուռնիահայերի հաստատվելը, ամենայն հավանականությամբ, կապված էր Չմյուռնիայում մեկը մյուսին հետևող տարերային աղետների հետ⁵¹: «Մաղրասեցի» (Ավետիս Կողբաշյան) ծածկանունով հեղինակը գրում է, որ Շամախու շրջակայքում քափառական կյանքով ապրելիս են եղել Ջանույան, Թավաքալյան և Օսմանյան ազգանվամբ «հայրենագուրկ հայ» ընտանիքները, որոնք, ըստ ավանդության, գաղթել էին Չմյուռնիայից⁵²: Կարելի է ենթադրել, որ Չմյուռնիայից հայերի մի հատվածի դուրս գալու հավանական պատճառը 1812 թ. բռնկված ժանտախտն էր, որին զոհ գնացին տասնյակ հազարավոր մարդիկ, իսկ շատերն էլ հեռացան քաղաքից: Հ. Քոսյանը վկայում է. «... սակայն մաղձայոյզն եւ ուրիշ հիւանդութիւններ երբեմն երբեմն հոգսերու մէջ կը ձգեն զմիւռնացիւն եւ գիւղերը կամ այլուր փախչելու կը ստիպեն բնակիչները»⁵³: Շամախիում հաստատված զմյուռնիահայերի թվում, առևտրականներից բացի, եղել են նաև արհեստավորներ, որոնք իրենց մասնակցությունն են բերել քաղաքի կառուցապատման աշխատանքներին: 19-րդ դարի վերջերին Շամախի այցելած Գ. Քաջբերունին գրում է, որ քաղաքի մոտ, գետի վրայով ձգվող միաթռիչք և սրբատաշ կամարով կամրջի հյուսիսային ծայրի արևելյան ճակատի վրա

44 Տես նույն տեղում, էջ 83, տես նաև Յուխտ Ա., Եզվ. աշխ., էջ 57-58:

45 Տես Юхт А., Армянские ремесленники в Астрахани в первой половине XVIII в., «Տեղեկագիր», ՉՍՄՂ ԳԱ (հաս. գիտ.), Եր., 1958, N 1, էջ 51:

46 Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.), աշխատասիրությամբ Ռ. Տ. Տիսանյանի, Եր., 1981, էջ 190:

47 Տես Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՉԱԱ), ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 4:

48 Տես Фитуня А., Եզվ. աշխ., стр. 125.

49 Տես «Աշակ», Թիֆլիս, 1874, հոկտեմբերի 4, N 38, տես նաև Фитуня А., Եզվ. աշխ., стр. 142:

50 Տես Սմբատյանց Ս., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախույ թեմի, Տիֆլիս, 1896, էջ 332:

51 Տես Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հ. Բ, Եր., 2003, էջ 182-183:

52 Տես Մատրասեցի, Ռ՝վբեր են մաղրասեցիները, «Նոր-դար», Թիֆլիս, 1903, փետրվարի 17, N 37:

53 Բօսեան Յ., Հայք ի Չմիւռնիա եւ ի շրջակայս, հ. Ա, Վիեննա, 1899, էջ 24:

արձանագրված է եղել. «Վարպետ Յակոբ Օսմանցի 1828»⁵⁴: Գ. Քաջբերունու մեկ այլ վկայությամբ՝ քաղաքի կենտրոնական փողոցի վրա հայ տնատեր բնակիչներից մեկը բացել էր դեղատուն, որը կրում էր նրա ազգանունը՝ Օսմանցով⁵⁵: Դեռևս 19-րդ դարի սկզբներից Շամախի էին տեղափոխվել նաև խոյեցի հայերը⁵⁶:

19-րդ դարի առաջին կեսին քաղաքն ապրում էր աշխույժ տնտեսական ու մշակութային կյանքով: Քաղաքի կրթամշակութային կյանքում ու վաճառականության բնագավառներում հայ բնակչության դերի շնորհիվ այն դիտվում էր իբրև հայկական քաղաք: 1828 թվականին, երբ Ռուսաստանը ստեղծում էր Հայկական մարզը, Լազարյաններն իրենց առաջադրած հայտնի ծրագրում՝ հայկական թագավորության սահմաններում ընդգրկել էին նաև Շամախին և Շաքին⁵⁷:

19-րդ դարի առաջին կեսին Շամախին համարվում էր Արևելյան Այսրկովկասի հայաշատ կենտրոններից մեկը: 1832 թ. տվյալներով՝ Շամախիի ծխերի թիվը հասնում էր 2233-ի, որից արական սեռի բնակիչների թիվը կազմում էր 5566⁵⁸: Նույն թվականի տվյալներով՝ քաղաքում հայապատկան տների թիվը հասնում էր 279-ի⁵⁹: Մինչդեռ, մեկ այլ պատմական աղբյուրի վկայությամբ, որ վերաբերում է 19-րդ դարի 30-ական թվականներին, Շամախի քաղաքի հայ բնակչության թիվը 566 հոգի էր⁶⁰: «Վովկասյան օրացույցի» 1849 թ. տվյալների համաձայն՝ Շամախի քաղաքն ուներ 3213 տուն՝ 20.149 (10.351 ար., 9798 իգ.) բնակիչ, որից հայ առաքելական՝ 2450, լյութերական⁶¹՝ 25⁶²: Սարգիս արք. Ջալալյանցի հաղորդած տվյալների համաձայն՝ Շամախիում 1850 թ. կար 4000 տուն, որից հայապատկան էր 600-ը. «Բնակիչք են Հայք և Մահմետականաք, տունք չորս հազար, յորոց վեց հարիւրն են Հայք...»⁶³: 1851 թ. տվյալներով՝ քաղաքն ուներ 5512 տուն և 20.386 (11.307 ար., 9079 իգ.) ազգաբնակչություն, որից հայերի թիվը 6238 էր (3287 ար., 2951 իգ.)⁶⁴: Ղ. Ալիշանի տեղեկացմամբ, 1850-ական թթ. սկզբներին քաղաքն ունեցել է 18.000 (այլ աղբյուրներով՝ 19.558)⁶⁵ ազգաբնակչություն, որից 1000 տուն հայ. «Բն. 18.000, յորս 1000 երդ Հայ...»⁶⁶: 1855 թ. տվյալների համաձայն՝

54 Քաջբերունի Գ., նշվ. աշխ., թ. 3:

55 Տե՛ս նույն տեղում:

56 Տե՛ս Գարագաշ Ա., Քաղցած փեսաները եւ գեօգրաֆիկ բալան (մի գիծ Շամախոյ կեանքից), Բագու, 1898, էջ 10:

57 Տե՛ս Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., 1989, էջ 308:

58 Տե՛ս Обзорение российских владений на Кавказе (в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, СПб., 1836, ч. III (Ширванская провинция), стр. 155.

59 Տե՛ս Նույն տեղում:

60 Տե՛ս Обзорение российских владений на Кавказе (в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, СПб., 1836, ч. IV, стр. 361, 370.

61 Շամախի քաղաքի հայության մեջ առաքելականներից բացի եղել են նաև բողոքական կամ ավետարանական եկեղեցու հետևորդներ: Ավետարանական քարոզչությունը Շամախի ներթափանցեց 1828 թ. սկսած՝ Շվեյցարիայի Բազել քաղաքից եկած քարոզիչներ Ֆ. Ջարեմբայի, Ավգուստ Դիտրիխի և Միրզա Ֆարուխի (Հարություն Գալստյան) միջոցով (Քասունի Եղիա, Լուսաշաւիղ, Պատմութիւն Հայ Աւետարանական շարժման (1846-1966), Պէրոթ, Լիբանան, 1947, էջ 230): Ավետարանական քարոզչությունը այնքան ընդլայնվեց Բազլի նահանգում, որ XIX դ. վերջերին Շամախին և Բաքուն դարձան արևելահայ ավետարանականության կենտրոններից (Ղուկասեանց Ղ., Բողոքականութիւն Կովկասու Հայոց մէջ (պատմական միւթեր), Թիֆլիս, 1886, տես նաև Ջամինեան Ար., Հայոց եկեղեցու պատմութիւն, Ա մաս, Նոր Նախիջևան, 1909, էջ 217: Այսրկովկասի Ավետարանական եկեղեցու պատմության հանգամանակից ընկությունը տես Ղազարյան Ա., Որնե՛ս Ներսէս Լևոնյան, Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Եր., 1999:

62 Տե՛ս Кавказский календарь на 1850 г., Тифлис, 1849, стр. 94 (այսուհետ՝ ԿԿ).

63 Ջալալեանց Ա., նշվ. աշխ., Բ մաս, էջ 400:

64 Տե՛ս Черепановъ П., Статистическое описание Шемахинской губернии. Шемахи, ԿԿ на 1852 г., Тифлис, 1851, стр. 429.

65 Կորկոտյան Ջ., Երևան քաղաքի ժողովրդագրությունը: Հայրուրամյա աճման պատկերը (1830-1930)՝ համադրված Անդրկովկասի մեծ քաղաքների հետ, Եր., 1931, էջ 37:

66 Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Սեծաց, Վենետիկ, Ա. Ղազար, 1855, էջ 93:

քաղաքում 3113 տնից հայերն ունեցել են 469, ռուսները՝ 164, շիաները՝ 1320 և սուննի մահմեդականները՝ 1130 տուն⁶⁷: Նույն թվականի տվյալներով՝ հայերի թիվը քաղաքում 2796 էր (1544 ար., 1252 իգ.)⁶⁸:

Շամախիի 19-րդ դարի վերջերի քաղաքային կյանքի վերաբերյալ իր ճանփորդական նոթերում ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Գաբրիել Քաջբերունին, ըստ որի Շամախի քաղաքը այդ շրջանում հիմնականում բաժանված է եղել երկու մեծ թաղամասերի⁶⁹: Հայերից բացի, քրիստոնեական թաղամասում ապրել են նաև ռուս պետական պաշտոնյաներ⁷⁰: Հայերի բնակելի տները եղել են միահարկ, երկհարկ ու եռահարկ, սյունաշար պատշգամբներով ու նախասրահներով: Քաղաքում հայապատկան տներն իրենց ճարտարապետական հորինվածքով և շքեղությամբ զգալիորեն տարբերվել են թաթարների տներից: «Շամախու հայ և թուրքի հին բնակարանը միմեանց մման է, իսկ նոր շինութիւնների մէջ հայինը գերազանց է: Վերջին ժամանակներս անհատների տան կտուրները ծածկվում են կուպրով, որ բերվում է Բաքուից: Բոլոր թէ հին և թէ նոր տները քարաշէն են»⁷¹, - գրում է «Մշակը»:

Շամախի քաղաքի ազգաբնակչության բնական աճի վրա խիստ բացասական ազդեցություն էին թողնում հաճախակի կրկնվող ավերիչ երկրաշարժերը: Քաղաքը, գտնվելով ակտիվ սեյսմիկ շրջանում, բազմիցս վնասվել էր 1668, 1669, 1806, 1828⁷², 1847, 1848, 1849 թթ. երկրաշարժերից⁷³: Հերթական աղետալի երկաշարժը տեղի ունեցավ 1859 թ. մայիսի 30-31-ին, որի հետևանքով ավերվեց 3250 շինություն, փլատակների տակ մնաց 400 մարդ⁷⁴: Ականավոր երկրաբան Հերման Աբիխի բերած տվյալներով, գոհվեց ավելի քան 100 շունչ⁷⁵: Կործանարար երկրաշարժերի վերաբերյալ Էջմիածնի սինոդին թեմի կոնսիստորիայի հունիսի 3-ի ծանուցման մեջ ասված է, որ «... չմնաց ի Շամախի և ոչ մի բնակութիւն առանց զգալի վնասատրութեան...»⁷⁶: Երկրաշարժի պատճառած նյութական վնասը կազմում էր 1.344.000 ռ.: Վնասի չափն այնքան մեծ էր, որ շամախեցիները 10 տարով ազատվում են հարկերից⁷⁷: Շամախիում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի պատճառով, երբ 1859 թ. վերջերին նահանգային կենտրոնական վարչությունը տեղափոխվում է Բաքու⁷⁸, դրա հետ մեկտեղ շամախեցիներից շատերը տեղաշարժվեցին Բաքու և այլ վայրեր, իսկ հիմնական հատվածը դարձյալ մնաց հարազատ օջախներում⁷⁹: 1859 թ. նոյեմբերի տվյալներով՝ Շամախիում ազգաբնակչության թիվը հասել էր 24.502-ի (13.141 ար., 11.361 իգ.)⁸⁰: Փաստորեն,

67 Տե՛ս ԿԿ և ԿԿ 1856 թ., Тифлис, 1855, стр. 272.
68 Տե՛ս նույն տեղում, стр. 270:
69 Տե՛ս Քաջբերունի Գ., նշվ. աշխ., ք. 5-6:
70 Տե՛ս նույն տեղում:
71 «Մշակ», Թիֆլիս, 1874, օգոստոսի 3, N 30:
72 1828 թ. հուլիսի 9-ին և 28-ին տեղի ունեցած երկրաշարժերի հետևանքով փլվել էր 247 տուն և 30 խանութ (Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 158):
73 Տե՛ս Շամախու աղետը (ժողովածու), Բագու, 1902, էջ 11:
74 Տե՛ս նույն տեղում, էջ 12:
75 Տե՛ս Абиx Г., Шемахинское землетрясение 1859 года (Природа и люди на Кавказе и за Кавказом: по рассказам путешественников, поэтическим произведениям А. Пушкина, Лермонтова, Я. Полонскаго и ученым исследованиям, сост. П. Надеждин, СПб., 1869, стр. 287).
76 ՅԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3844, ք. 1: Օ
77 Տե՛ս Լ., Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 8, N 29:
78 Տե՛ս Весь Кавказ. Промышленность, торговля и сельское хозяйство Северного Кавказа и Закавказья. Составил и издал М. С. Шапшович, Баку, 1914, стр. 21, տե՛ս նաև. Акты, собранные Кавказскою археологическою комиссиею, под ред. Ад. Берже, т. XII, Тифлис, 1904, стр. 398.
79 Տե՛ս Շամախու աղետը, էջ 12:
80 Տե՛ս Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, աշխատասիրեաց Տ. Սրբուհի Ա. Երիցեանց, Թիֆլիս, 1874, էջ 64:

երկրաշարժից հետո ազգաբնակչության թիվը պակասել էր 585-հոգով: Նվազեց նաև հայ բնակչության թիվը: 1861 թ. տվյալներով՝ քաղաքում հայապատկան տների թիվը 876 էր⁸¹: Երկրաշարժի հետևանքները վերացնելուց հետո Շամախին աստիճանաբար ընկավ բնականոն զարգացման ընթացքի մեջ: Աղբյուրների հաղորդած տեղեկությունների համաձայն՝ երկրաշարժից հետո քաղաքն ուներ 4972 տուն, իսկ ազգաբնակչության թիվը 25.087 էր (13.999 ար., 11.088 իգ.)⁸²: 1865 թ. դրությամբ քաղաքն արդեն ուներ քարաշեն 5192, փայտաշեն 19 տուն և 29.027 ազգաբնակչություն⁸³: Այդ շրջանում քաղաքն ունեցել է 47 փողոց, 3 հրապարակ և 7 կամուրջ⁸⁴:

Շամախիում հերթական երկրաշարժը տեղի ունեցավ 1869 թ. օգոստոսի 21-ին, որի հետևանքով փլվեց 120 տուն, իսկ մնացածը խախտվեց ու մեծամեծ վնասներ ստացավ⁸⁵: Բսպառ խախտվել էին Սբ. Աստվածածին Մայր եկեղեցու տանիքը, կաթողիկեն, թաղակապ կամարները և հատկապես զանգակատունը⁸⁶: «Տոմար ընտանեկան» օրացույցում նշվում է, որ 1869 թ. քաղաքում ապրել է 2428 հայ⁸⁷: 1870 թ. քաղաքն ուներ 24.502 (13.141 ար., 11.361 իգ.) բնակիչ⁸⁸: Անանիա արք. Համազասպյանի՝ կաթողիկոս Գևորգ Ե Տփղիսեցուն հղած զեկուցագրում նշված է, որ մինչև 1871 թ. քաղաքում հայապատկան տները թիվը հասնում էր 1200-ի⁸⁹: Երկրաշարժից երեք տարի անց՝ 1872 թ. հունվարի 16-ին, տեղի ունեցավ ավելի մեծ ուժգնության երկրաշարժ: Նախքան երկրաշարժը քաղաքն ուներ 24.821 բնակիչ⁹⁰: Երկրաշարժի պատճառով զոհվեցին 118 հոգի, վիրավորների թիվը հասնում էր 44-ի⁹¹: Չոփածների թվում հայ առաքելականները կազմում էին 30 հոգի. «... ընդ յանկարծամահ մեռելաձև գտանին հայք լուսատուրչականք մինչ ց30»⁹²: Երկրաշարժի հետևանքով հիմնովին վնասվեց քաղաքի բարձրադիր մասում գտնվող հայկական թաղամասը: Հիմնահատակ ավերվեց հայոց նորաշեն եկեղեցին, նյութական վնասը կազմում էր 1.137.000 ռ.⁹³: Երկրաշարժի պատճառով կրկին սկսեց նվազել քաղաքի ազգաբնակչության թիվը: Տնտեսական անկման ու ավերումների հետևանքով հազարավոր անգործ մնացած արհեստավորներ և տուրքերից խեղճացած գյուղացիներ թողնում են հայրենի եզերքը և գաղթում Բաքու և Շամախիի հայ բնակչության թիվն աստիճանաբար սկսում է նվազել: Այս պայմաններում արագորեն ընկնում է արհեստների ու առևտրի կշիռը, բազմաթիվ վաճառականներ սնանկանում են, արհեստավորները մնում են անգործ, որի հետևանքով Շամախին աստիճանաբար կորցնում է երբեմնի փառքը և նյութական բարեկեցությունը: Այդուհանդերձ, Բաքվի հետ անհավասար մրցակցության պայմաններում Շամախին փորձում էր պահպանել իր հնամենի շուքը՝ երկրամասի հայության համար մնալով հոգևոր և մշակութային կենտրոն:

81 Տե՛ս Սմբատեանց Ս., նշվ. աշխ., էջ 138:

82 Տե՛ս СНМ-1859-1864, стр. 100.

83 Տե՛ս Свод статистических сведений о Кавказе, т. I, поставлен и издан под редакцией действительного члена отдела Н. И. Воронова, Тифлис, 1869, отд. II, стр. 62, 67.

84 Տե՛ս КК на 1856 г., стр. 273.

85 Տե՛ս «Արարատ», սեպտեմբեր, 1869, էջ 104:

86 Տե՛ս նույն տեղում, էջ 104-105:

87 Տե՛ս Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, էջ 143:

88 Տե՛ս Сборник сведений о Кавказе. Списки населенных местъ Кавказскаго края. Составлены главнымъ редакторомъ комитета Н. Зейдлищемъ, т. II, Тифлис, 1872, стр. 351.

89 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, ք. 29, տե՛ս նաև Սարգիսբեկեան Ս., Շամախին, «Մշակ», Թիֆլիս, 1902, մարտի 21, N 62:

90 Տե՛ս Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, էջ 143:

91 Տե՛ս Зелинский С., նշվ. աշխ., стр. 9.

92 ՅԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6041, ք. 1:

93 Տե՛ս L., Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 8, N 29:

«Մշակի» Շամախիի թղթակից, «Հ. Ղ.» ծածկանունով հանդես եկող Գ-արեգին քին. Գուկասյանի «Նամակ Շամախուց» վերտառությամբ մի թղթակցությունից հայտնի է դառնում, որ քաղաքը երկրաշարժից հետո ունեցել է 24.000 ազգաբնակչություն: Դրա մեծագույն մասը՝ 6/7-ը, կազմել են սուննի և շիա աղանդին հարող կովկասյան թաթարները, իսկ 1/7 մասը՝ հայերը⁹⁴: 1873 թ. ընտանեկան ցուցակների տվյալներով՝ քաղաքի հայերի թիվը կազմում էր 5177 (2940 ար., 2237 իգ.)⁹⁵: Շամախուց 1880 թ. հուլիսի 20-ին «Մշակին» հղված մի թղթակցությունում ասվում է, որ քաղաքն ուներ 900 տուն հայ⁹⁶: 1886 թ. տվյալներով՝ քաղաքի ազգաբնակչության թիվը 22.139 էր (13.286 ար., 8853 իգ.)⁹⁷, որից հայերի թիվը արտագաղթի հետևանքով 3962 էր (2690 ար., 1272 իգ.)⁹⁸, կազմելով ամբողջ բնակչության 17,90%-ը⁹⁹: Ըստ դավանանքի, հայ առաքելականների թիվը 3638 էր (2452 ար., 1186 իգ.), հայ բողոքականներինը՝ 324 (238 ար., 86 իգ.)¹⁰⁰: Նույն թվականի տվյալներով՝ ռուս բնակչության թիվը հասնում էր 668-ի (512 ար., 156 իգ.), իսկ կովկասյան թաթարներինը՝ 17.509-ի (10.084 ար., 7425 իգ.)¹⁰¹: 1890 թ. դրությամբ հայապատկան տների թիվը հասնում էր 415-ի¹⁰², իսկ բնակչության թիվը 3573 էր (1846 ար., 1727 իգ.)¹⁰³: Շամախու գավառային վարչության կողմից 1894 թ. անցկացված վիճակագրության համաձայն՝ քաղաքի բնակչության ընդհանուր թիվը 22.293 էր (13.552 ար., 8741 իգ.), որից հայերի թիվը 4042 էր (2624¹⁰⁴ ար., 1418 իգ.)¹⁰⁵: Ըստ դավանանքի՝ հայ բնակչությունից առաքելական էին 3641 (2369 ար., 1272 իգ.), լյութերական՝ 401 (255 ար., 146 իգ.) հոգի¹⁰⁶: Ռուս բնակչության թիվը 690 էր (494 ար., 196 իգ.)¹⁰⁷:

Հետագայում ևս Շամախիի հայ բնակչության թվի տատանումները շարունակվում են: Բնակչության շարժընթացի ոչ հաստատուն բնույթը բացատրվում է թե՛ տնտեսական անկայուն պայմաններով և թե՛ ակտիվ տեղաշարժերով: Բաքվի նահանգում 1892 թ. հունիսի 6-ից մինչև նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում բռնկված խոլերայի համաճարակի հետևանքով Շամախիում հիվանդացել էր 288 և մահացել 225 հոգի¹⁰⁸: Ստ. Ջելինսկու ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նույն տարում հայ բնակչության մահացության թիվը կազմել է 144 մարդ: Մահացության բարձր ցուցանիշը պայմանավորված էր խոլերայով¹⁰⁹: 1895 թ. դրությամբ քաղաքում հայ առաքելական ընտանիքների թիվն անցնում էր 500-ից¹¹⁰: 1886 թ. մարդահամարից հետո ավելի քան տասը

94 Տե՛ս Գ. Ղ., Նամակ Շամախուց, «Մշակ», Թիֆլիս, 1872, հուլիսի 20, N 28:

95 Տե՛ս Списокъ населенныхъ местъ по сведениямъ 1873 г., Бакинская губерния. Составленъ главнымъ редакторомъ комитета Н. Зейдлицемъ, Тифлис, 1879, (ռ. ռ., այսուհետ՝ СНМ-1873): Հարկ է նշել, որ 1873 թ. ընտանեկան ցուցակներում Շամախի քաղաքի տների և ազգաբնակչության վերաբերյալ առկա թվերը ճշգրտորեն համապատասխանում են 1863 թ. տվյալների հետ: Հակված ենք կարծելու, որ 1873 թ. տվյալներում տեղ են գտել ոչ ճիշտ հաշվարկներ:

96 Տե՛ս Հայ-լուսաւորչական, Նամակ Բագուից, «Մշակ», Թիֆլիս, 1880, օգոստոսի 15, N 142:

97 Сводъ статистическихъ данныхъ о населении Закавказскаго края, извлеченныхъ изъ посемейныхъ списковъ 1886 г., Бакинской губернии, Тифлис, 1893 (այսուհետ՝ ССДНЗКИПС-1886).

98 Տե՛ս նույն տեղում:

99 Տե՛ս նույն տեղում:

100 Տե՛ս նույն տեղում:

101 Տե՛ս նույն տեղում:

102 Տե՛ս Ամբաստանց Մ., նշվ. աշխ., էջ 138

103 Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 159:

104 Ստ. Ջելինսկու վկայակոչած տվյալում արականների թվում 6-ի փոխարեն սխալմամբ տպագրված է 9:

105 Տե՛ս Описание города Шемаха. Составилъ С. П. Зелинский, Тифлисъ, 1896, стр. 22:

106 Տե՛ս նույն տեղում:

107 Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև «Մուրճ», Թիֆլիս, 1894, N 10-11, էջ 1388:

108 Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1892, դեկտեմբերի 20, N 148:

109 Տե՛ս Зелинский С., նշվ. աշխ., стр. 19.

110 Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1895, հունվարի 11, N 4:

տարի անց՝ 1897 թ. անցկացված հաշվառման արդյունքում նկատվում է քաղաքի հայ բնակչության թվի աստիճանական նվազումը: 1897 թ. մարդահամարի տվյալներով՝ քաղաքի ազգաբնակչությունը կազմում էր 20.007 (10.463 ար., 9544 իգ.), որից հայ՝ 2515 (1274 ար., 1241 իգ.) մարդ¹¹¹:

Այսպիսով, 1832-1897 թթ. Շամախի քաղաքի հայ բնակչության շարժմանը ունեն հետևյալ պատկերը.

Տարեթիվ	Ծուխ	ար.	իգ.	Բնակչ. ընդ. թիվը
1832	279	-	-	-
1848	600	-	-	-
1849	-	-	-	2475
1851	-	3298	2964	6262
1855	469	1544	1252	2796
1861	876	-	-	-
1869	-	-	-	2428
1871	-	-	-	1200
1873	-	2940	2237	5177
1880	900	-	-	-
1886	-	2690	1272	3962
1890	415	1846	1727	3573
1894	-	2924	1418	4342
1897	-	1274	1241	2515

Ինչպես հետևում է աղյուսակում բերված թվերից, 1886 թ. համեմատությամբ հայ բնակչության թիվը 1447 հոգով նվազել էր: Դա հիմնականում կապված էր Բաքու և այսրկովկասյան այլ քաղաքներ արտագնա աշխատանքի մեկնելու հետ: Այսպիսով, 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ Բաքվի նավթարդյունաբերության արագ զարգացումը բացասական ազդեցություն ունեցավ Շամախի քաղաքի հետագա առաջընթացի վրա, որն արդեն դարի 70-ական թթ. սկզբներից սկսել էր տնտեսական անկում ապրել:

Շամախի բնակչության, այդ թվում նաև հայերի բնական աճի վրա իր բացասական ազդեցությունն է թողնում 1902 թ. հունվարի 31-ին տեղի ունեցած կործանիչ երկրաշարժը¹¹², որը վայրկյանների ընթացքում հողին հավասարեցրեց գրեթե ամբողջ քաղաքը: «Ով գոնե մի անգամ տեսել է Շամախին, նա այժմ կարող է զարհուրել այն աւերմունքից, որ գործել է այս թշուառ քաղաքում յունվարի 31-ի երկրաշարժը...¹¹³», - նշում է քաղաքի մի տարեգիր: Կործանիչ այդ երկրաշարժը հետևյալ կերպ է նկարագրել մի այլ ակնմատես. «... յանկարծ քաղաքին մեջ հոս և հոն պզտի բլուրներ բարձրացան և շենքերը սկսան շարժիլ. յետոյ քաղաքին ստորին մասը՝ դեպ ի վեր բարձրացաւ, ինք իր վրայ քիչ մը շրջեցաւ, և իսկոյն ահաւոր դողդիւնով մը խորտակուեցաւ, կործանուեցաւ: Չարհուրելի վայրկեան մը

111 Стѣ Первая всеобщая перепись населения Российской империи, 1897, LXI. Бакинская губерния. под редакцией Н. А. Тройнишского, СПб., 1905, т. 61, стр. 1, տես նաև таблица XIII, стр. 53.

112 Стѣ Стр-Մկրտչեան Գ., Շամախու երկրաշարժը և թեմական հաստատութեանց Բազու փոխադրելու խնդիրը, «Արարատ», 1902, փետրվար, էջ 133-134:

113 Շամախու աղետը, էջ 24:

եր. 600 շենքեր են հազիւ տասը տուն կրցան կանգուն մնալ, բոլոր քաղաքը աւերակաց կոյտ մը դարձաւ»¹¹⁴: Աղետից տուժում են արդյունաբերական գրեթե բոլոր կառույցները: Հիմնովին ավերվում են հայկական և թաթարական թաղերը: Ներսից վնասվում է Սբ. Աստվածածին Մայր եկեղեցին, ամբողջությամբ քանդվում է առաջնորդարանը, որի արխիվը մնում է փլատակների տակ¹¹⁵: Երկրաշարժն այնքան ուժեղ էր, որ էպիկենտրոնից ցնցումները տարածվում են մինչև Գանձակ, Նուխի, Դուբա, Դերբենդ, Բաքու և շրջակա գավառներ¹¹⁶: Երկրաշարժի նյութական վնասները գնահատվեցին 15 մլն ռուբլի¹¹⁷: Նշենք, որ նախքան երկրաշարժը Շամախին ուներ 5000 տուն (հայապատկան էր 350-ը)՝ 22.000 ազգաբնակչությամբ¹¹⁸: Մինչև փետրվարի 5-ը ավերակներից հանվել էր 2200 հոգի¹¹⁹: Երկրաշարժից տուժել էր 2561 ընտանիք, որոնց անդամների թիվը հասնում էր 14.300-ի¹²⁰: Մինչև փետրվարի 11-ը զոհերի թիվը կազմում էր 882 հոգի (43 ար., 330 իգ.) և 590 երեխա¹²¹: Ընդհանուր առմամբ փլատակների տակ մնաց 5000-ը¹²², որոնցից զոհվեց 1500-ից ավելի մարդ, իսկ հարյուրավոր մարդիկ ստացան տարբեր աստիճանի խեղումներ և վնասվածքներ¹²³: Հայերն ունեցան 31 զոհ¹²⁴: Հայերի զոհերի թվի նվազ լինելը պայմանավորված էր այն հանգամանքով, որ երկրաշարժի պահին մոտ 300 հայեր եկեղեցում մասնակցում էին թաղման պատարագին և առաջին իսկ ցնցումի ժամանակ հասցրել են փողոց դուրս գալ և փրկվել¹²⁵: Շամախու հերթական աղետալի երկրաշարժից հետո փրկված ազգաբնակչությունից մոտ 5000 հոգի, այդ թվում նաև հայերը գաղթեցին Բաքու և Թիֆլիս¹²⁶: Գաղթող ընտանիքներին տրվում էին համապատասխան նպաստներ: «Երկրաշարժը ոչ միայն կործանեց հայկական և թրքական թաղերը, -մշում է Անանիա արք. Համազասպյանը, - այլև տարագիր ցրուց հայերին զանազան քաղաքներ, գլխատրապէս Բագու, ուր այժմ կայ 500 տուն»¹²⁷: Երկրաշարժից տուժածներին օգնող կոմիտեի անդամ Արշակ Կարապետյանի կազմած վիճակագրության համաձայն՝ մինչև 1902 թ. փետրվարի 6-19-ը ընկած ժամանակահատվածում Բաքու գաղթեցին 515 հայեր: Ըստ օրերի, փետրվարի 6-ին գաղթել են 32, 7-ին՝ 62, 8-ին՝ 121, 9-10-ը՝ 201, 12-ին՝ 21, 14-ին՝ 41, 15-18-ը՝ 18 և 19-ին՝ 19 հոգի¹²⁸: Նույն ժամանակում կովկասյան թաթարներից գաղթել են 970, իսկ ռուսներից՝ 11 հոգի¹²⁹: Կարճ ժամանակ անց, Բաքու գաղթած շամախեցի 6 հայ ընտանիք կրկին վերադառնում է Շամախի¹³⁰:

Երկրաշարժից հետո զանգվածային արտահոսքի պատճառով կտրուկ նվազեց

114 «Բազմավէպ», Վենետիկ, 1902, մայիս, N 5, էջ 247:
 115 Տե՛ս Տէր-Մկրտչեան Գ., նշվ. աշխ., էջ 133-134, տե՛ս նաև ՅԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 31:
 116 Տե՛ս Շամախու աղետը, էջ 48-51:
 117 Տե՛ս նույն տեղում, էջ 45:
 118 Տե՛ս Վրձին (Ալ. Քալանթար), Սանրանկար, «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 10, N 31, տե՛ս նաև Սարգիսբէկեան Ա., Շամախին, «Մշակ», 1902, Թիֆլիս, մարտի 21, N 62:
 119 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 10, N 31:
 120 Տե՛ս Շամախու աղետը, էջ 45, տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 13, N 33:
 121 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 14, N 34:
 122 Տե՛ս «Բազմավէպ», Վենետիկ, 1902, մայիս, N 5, էջ 247:
 123 Տե՛ս Սարգիսբէկեան Ա., Շամախու կործանումը (Նամակ Շամախուց), «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 9, N 30, տե՛ս նաև Շամախու աղետը, էջ 46:
 124 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 13, N 33 տե՛ս նաև փետրվարի 14, N 34:
 125 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 14, N 34:
 126 Տե՛ս Սարգիսբէկեան Ֆ., Երկրաշարժը Շամախիում (Նամակ Բագուից), «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 13, N 33, տե՛ս նաև փետրվարի 14, N 34:
 127 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, թ. 29:
 128 Տե՛ս Կարապետեան Ա., Նամակ Շամախուց, «Մշակ», Թիֆլիս, 1902, մայիսի 5, N 48:
 129 Տե՛ս նույն տեղում:
 130 Տե՛ս նույն տեղում:

քաղաքի ազգաբնակչության թիվը: Հաճախակի կրկնվող ավերիչ երկրաշարժերից բացի, արտահոսքը կապված էր նաև սոցիալ-տնտեսական մի շարք պատճառների հետ: Բաքվի արագ առաջադիմության պայմաններում Շամախիում աստիճանաբար սկսում էր պակասել արդյունաբերական ձեռնարկությունների թիվը, որի հետևանքով այլևս չէր ապահովվում բնակչության զբաղվածությունը: Այդ պատճառով քաղաքի աշխատուժի զգալի մասն ամեն տարի մեկնում էր տարբեր շրջաններ, ուր ապրելու և աշխատանքի բավարար պայմաններ էին գտնում: «... կործանարար երկրաշարժերը, - գրում է «Հորիզոնը», - քաղաքից դուրս են մղել ազգաբնակչության խոշորագույն ու լաւ մասը... փախչում ու փախչում են անընդհատ դէպի նախաշխարհն ու Անդրկասպեան երկիրը, թողնելով ծերերին ու անընդունակներին...»¹³¹: Շամախի քաղաքի ազգաբնակչության էթնիկ կազմի և բնակչության շարժընթացի վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում 1904 թ. վիճակագրական տվյալները: Ըստ այդմ՝ քաղաքի բնակչությունը 22.725 էր (12.392 ար., 10.333 իգ.), որից հայերի թիվը՝ 1733 (927 ար., 806 իգ.)¹³²: Այդ թվից հետևում է, որ երկրաշարժից հետո բնակչության թիվը նվազել էր 2275-ով:

Բաքվում 1905 թ. փետրվար և օգոստոս ամիսներին տեղի ունեցած հայ-թաթարական ընդհարումներն արձագանք գտան նաև Բաքվի նահանգի գավառներում: Թեև Շամախիի հայերը գերծ էին մնացել հարձակումներից, այդուհանդերձ այդտեղ ևս հրահրումներ սկսելու նպատակով համաթուրանականության քարոզիչները մեծ աշխատանք էին տանում¹³³: Նկատի ունենալով այդ հանգամանքը, Թիֆլիսում 1906 թ. փետրվարի 3-ին հրավիրված ՀՅԳ «Զինվորական խորհրդակցությունը» որոշել էր. «Սի ընդհանուր հրամանատարություն ստեղծել Նուխու, Արեշի, Գեօկչայի եւ Շամախու գավառների համար»¹³⁴: Ջարդեր կազմակերպելու նպատակով, սեպտեմբերի 6-ին քաղաքի թաթարները հարձակվում են հայերի վրա: Տեղի ունեցան մասնակի բախումներ և հայերի սպանության դեպքեր: Բարեբախտաբար, ոստիկաններին հաջողվում է կանխել սպասվող ընդհարումները¹³⁵: 1905 թ. սեպտեմբերի դրությամբ Շամախիում հայերն ունեին 200 տուն¹³⁶, 1906-ին՝ 1730 բնակիչ¹³⁷, 1909-ին՝ 300 տուն՝ 1756 բնակիչ¹³⁸ (898 ար., 858 իգ.)¹³⁹: Քաղաքային վարչության տվյալների համաձայն՝ 1910 թ. ողջ քաղաքն արդեն ուներ 23.144 (12.612. ար., 10.532 իգ.) ազգաբնակչություն¹⁴⁰: Գավառային վարչության տվյալների համաձայն՝ 1912 թ. հունվարի 1-ի դրությամբ քաղաքի տեղաբնիկ հայ բնակչության թիվը 4528 (2342 ար., 2186 իգ.) էր¹⁴¹: Ամանիա արք. Համազասայանի կողմից 1912 թ. կազմված Շամախու թեմի վիճակագրական տեղեկագրում նշված է, որ քաղաքի հայերն ունեն 315 տուն՝ 4390 (2225 ար., 2165 իգ.) բնակիչ¹⁴²: Նույն տեղեկագրում նշված

131 «Հորիզոն», Թիֆլիս, 1913, նոյեմբերի 3, N 248:

132 Այդուհանդերձ կազմված է ըստ КК на 1907 г., стд. II, стр. 321-ի տվյալների, հաշվարկը մերն է :

133 Տե՛ս Նիւթեր Դ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ Ե. Փամպուրեանի, հ. Ե., Պելլորթ, 2007, էջ 381:

134 Տե՛ս նույն տեղում, էջ 5:

135 Տե՛ս Յովհ. Քօս. [Եան], Նամակ Շամախուց, «Մշակ», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 20, N 189:

136 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1905, սեպտեմբերի 16, N 186:

137 Տե՛ս Նիւթեր Դ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Ե, էջ 3:

138 Նշենք, որ 1909 թ. նոյեմբերի 9-16-ը Բաքվի նահանգապետ Վ. Ալիշևսկու նախագահությամբ զենսով ու տեղիներով վերաբերյալ հրավիրված նահանգային խորհրդակցության 13-րդ նիստին Ջավաթի գավառի թաթար ներկայացուցիչ Մ. Ալիևը, ելույթ ունենալով, միտումնավոր կերպով նվազեցրել էր նույն տարում Շամախիի հայ բնակչության թիվը և նշել 800 հոգի (Бакинское губернское совещание о введении земства, Баку, 1909, стр. 92), ինչը բացարձակ կեղծիք էր:

139 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1835, ք. 14:

140 Տե՛ս КК на 1912 г., Тифлис, 1911, стр. 232.

141 Տե՛ս КК на 1913 г., Тифлис, 1912, стр. 141

142 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, ք. 9:

է, որ 1912 թ. օգոստոս ամսվա դրությամբ՝ Շամախիում հաստատվել էին նաև շրջակա գյուղերից տեղափոխված հայ ընտանիքներ¹⁴³: 1912 թ. թեմական տարեկան վիճակագրական տվյալների համաձայն՝ քաղաքն ունեցել է 4384 (2226 ար., 2158 իգ.) հայ բնակիչ¹⁴⁴: Գավառային վարչության 1914 թ. հունվարի 1-ի տվյալների համաձայն՝ քաղաքում արդեն ազգաբնակչության թիվը հասնում էր 27.527-ի (14.675 ար., 12.852 իգ.)¹⁴⁵, որից հայեր էին 4460-ը (2288 ար., 2172 իգ.)¹⁴⁶, կազմելով ընդհանուր բնակչության 16,20%-ը¹⁴⁷:

Շամախի քաղաքի հայ բնակչության թիվը նվազեց Առաջին աշխարհամարտի սկսվելու պատճառով, երբ հայ երիտասարդությունը զորակոչվեց գործող բանակ: Գրա հաստատումն է «Հորիզոնի» հետևյալ վկայությունը. «Ինչպես հարաւային Կովկասի բոլոր վայրերն անխտիր, նոյնպէս և խեղճ ու մոլոր Շամախին ապրում է արհաւրակից օրեր և աներևակայելի թանգութեան ճիրանների մէջ ջրածգօրէն գալարում: Հացը դժար է ճարում: Տուն չկայ, որ մի կամ երկու զինուոր չունենայ կռի ղաշտում»¹⁴⁸:

1916 թ. հունվարի 1-ի դրությամբ, քաղաքի ազգաբնակչության թիվը 27.752 էր (14.811 ար., 12.941 իգ.), որից հայեր՝ 4534 (2314 ար., 2220 իգ.), ընդ որում՝ բոլորն էլ տեղաբնիկ¹⁴⁹, կազմելով ընդհանուր բնակչության 16,3%-ը¹⁵⁰:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչպես է ընթացել Շամախիի ազգաբնակչության թվաճը 1850-1916 թթ., տարբեր աղբյուրների համադրության միջոցով կարելի է ստանալ հետևյալ պատկերը: Բնակչության թիվը 1850-ին եղել է 19.558, 1866-ին՝ 22.139, 1897-ին՝ 20.007, 1914-ին՝ 27.527, 1916-ին՝ 27.752: Վերը նշված թվերը ցույց են տալիս, որ Շամախի քաղաքում բնակչության բնական աճը կատարվել է բավականին դանդաղ: Բնակչության ընդհանուր թիվն ավելացել էր ընդամենը 1,4 անգամ: Աճի ցածր մակարդակի պատճառը հիմնականում արտագաղթն էր, երբ կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, տնտեսապես քայքայված գյուղացիներն ու արհեստավորները, շատ դեպքերում նաև ընտանիքներով մեկնում էին Բաքու և այսրկովկասյան այլ քաղաքներ:

Շամախիի հայ բնակչությունն ապրում էր սոցիալ-տնտեսական և կրթա-մշակութային խաղաղ կյանքով, երբ թաթարները՝ տուրք տալով համաթուրանականության քարոզչությանը, Բաքվի նահանգի հայաշատ վայրերում 1918 թ. մարտ-ապրիլին կազմակերպեցին հայերի ջարդեր, որի հետևանքով նվազեց ոչ միայն հայ բնակչության թիվը, այլև ապրելու համար ստեղծվեցին արհեստական խոչընդոտներ: Թաթար ելուզակները, խոշոր կալվածատեր Ջիաթխանովի ղեկավարությամբ 1918 թ. մարտի 15-ին 3000 հոգով գազազած հարձակվեցին Շամախիի խաղաղ հայ բնակչության վրա, ինչն ուղեկցվեց նաև սպանություններով¹⁵¹: Շամախիի հայ բնակչության դեմ սպասվող նոր ոճրագործությունների մասին էր վկայում Բաքվի հայոց ազգային խորհրդի ձեռքում հայտնված Ջիաթխանովի ստորագրությամբ՝ Շամախիի թաթարներին

143 Տե՛ս նույն տեղում, թ. 29:

144 Տե՛ս Մինասեան Մ., Տեղեկագիր 1912 թ., (9), Շամախու թեմ, «Արարատ», 1914, հուլիս, էջ 633:

145 Տե՛ս КК на 1915 г., Тифлис, 1914, стр. 225.

146 Տե՛ս նույն տեղում, стр. 223:

147 Տե՛ս Իշխանեան Բ., Վիճակագրական ուսումնասիրութիւն Անդրկովկասեան ժողովուրդների, Ա մաս, ժողովուրդների տերիտորիական բաժանումները եւ նրանց աճումը Անդրկովկասում, Բազու, 1919, էջ 183, 188:

148 «Հորիզոն», Թիֆլիս, 1916, դեկտեմբերի 21, N 824:

149 Տե՛ս КК на 1917 г., Тифлис, 1916, стр. 179.

150 Տե՛ս նույն տեղում, стр. 180-221.

151 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 4, թ. 56:

ուղարկված հեռագիրը, որում խոսք էր գնում Շամախիում հայերի կոտորածների մասին¹⁵²: Շնորհիվ քաղաքում գտնվող 45-50 հայ զինվորների, հաջողվեց կանխել թաթարների հետագա հարձակումները¹⁵³: Ավելին, հայ զինվորները, ցարական բանակի ենթասպա Հովհաննես Ջանումյանի հրամանատարությամբ, մարտի 18-ին ստիպված եղան պատասխան կրակ բացել Շամախիի թաթարական թաղամասի վրա և գրոհով գրավել այն¹⁵⁴: Շամախին հետ գրավելու և հայերի դեմ կազմակերպված հարձակում սկսելու նպատակով, 4-5 օր հետո, Գանձակից, Գյոքչա ավանից, Նուխի և Արեշ գավառներից այստեղ կուտակվեցին շուրջ 4000 զինված թաթարներ: Այլ ելք չունենալով՝ մարտի 26-ին գիշերը՝ ժամը 12-ին, Շամախուց բոլոր քրիստոնյաները, թեմի առաջնորդ Բագրատ եպս. Վարդապարյանի գլխավորությամբ, հեռանում են Ջաբանի մոլեկանների գյուղը: Նրանց է միանում նաև Մատրասայում կենտրոնացած հայ բնակչությունը¹⁵⁵: Շամախի տանող ճանապարհին գտնվող հայկական գյուղերն ավերելուց ու կողոպտելուց հետո թաթարներն իրենց վայրագությունները շարունակում են նաև Շամախիում, ուր բարբարոսաբար այրում են քաղաքի քրիստոնեական ամբողջ մասը: Հիմնահատակ ավերվում և հրկիզվում են թեմական կոնսիստորիան, առաջնորդարանը, հայկական դպրոցի շենքն իր գրադարան-ընթերցարանով¹⁵⁶ և քաղաքի լյութերական հայերի ժողովարանը: «Շամախի հայկական մասը ամբողջով ևս ավերված ու հրկիզված են»¹⁵⁷, - գրում է «Արեւը»: Ջաբանի գյուղում տեղակայված հայ բնակչությունը, ապահովության նկատառումներով, մարտի 27-ին տեղափոխվում է Շամախուց 9 կմ հեռավորության վրա գտնվող Խիլմիլի գյուղը և մեկ ամսից ավելի բնակվում այդտեղ¹⁵⁸:

Բաքվի Կոմունայի կողմից Գյոքչա-Շամախիի ընդհանուր լիազոր հրամանատար նշանակված Եղիշե Պահլավունու¹⁵⁹ հաջողվում է Ջուրովկա-Հաջի-Կաբուլ-Գուբա երկաթգծի շրջակայքում և Խուրդալարի տակ ապրիլի 10-ից 17-ը ընթացած մարտերում լիակատար հաղթանակ տանել «Վալրի դիվիզիայի» հրամանատար Լ. Մաղալովի հանդեպ, որը խայտառակ պարտությունից հետո նահանջեց Գանձակ, ապա՝ Վրաստան¹⁶⁰: Հետ մղելով «Վալրի դիվիզիան»՝ հայկական զորախումբը ձեռնամուխ եղավ գավառներում հայ-թաթարական ընդհարումները կանխելու, Շամախիից և հայկական գյուղերից տեղահան եղած բնակչությանն իր նախկին վայրերը տեղափոխելու գործին: Ապրիլի 15-ին հայկական զորախմբի կողմից Շամախին գրավելուց հետո, դեռևս մարտի 27-ից Խիլմիլի գյուղում հաստատված շամախահայերը հնարավորություն ստացան վերադառնալ քաղաք¹⁶¹: Մեկ ամսից ավելի Խիլմիլի գյուղում հանգրվանած գաղթականները, սննդի պակասության և հակասանիտարական պայմանների պատճառով գլուխ բարձրացրած տարափոխիկ հիվանդությունների և համաճարակների (տիֆ, ծաղիկ և այլն) հետևանքով, ունեցան 200-ից ավելի զոհ¹⁶²: Իսկ Շամախի

152 Տե՛ս Դարբինեան Ռ., Կեանքիս գրքեն, երկեր, հ. Ա, Պեյրուք, 1979, էջ 237:

153 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, ք. 6:

154 Տե՛ս նույն տեղում:

155 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, ք. 6:

156 Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, ք. 126, վավ. 300:

157 «Արեւ», Բագու, 1918, ապրիլի 12, N 75:

158 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, ք. 6:

159 Տե՛ս Եղիշե Պահլավունի, Յուշամատեան, կազմեց եւ խմբագրեց՝ Նորայր Պահլավունի, Եր., 2006, էջ 98:

160 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, ք. 3, տե՛ս նաև Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հ. 4 (1917 հոկտեմբեր-1918 մայիս), Եր., 1978, էջ 303:

161 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, ք. 6:

162 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 338, ք. 65:

վերադարձած հայերը, որոնց բնակարաններն ամբողջովին կողոպտվել և հրկիզվել էին, հետզհետե սկսեցին տեղափոխվել Բաքու¹⁶³:

Շամախի քաղաքի հայությունը ծանր հարված ստացավ հատկապես 1918 թ., երբ թուրքական զորքերը, հայազրկելով Արևմտյան Հայաստանը, արշավեցին Այսրկովկաս և հասան մինչև Բաքու: Այդ արշավանքի ժամանակ հուլիսի 20-ին գրավվեց Շամախին, որի հետևանքով կոտորածի, բռնի մահմեղականացման ու տեղահանության ենթարկվեց քաղաքի հայությունը¹⁶⁴: Գատարկված հայապատկան տներն ու ողջ ունեցվածքը բռնագրավեցին հարևան գյուղերի թաքարները: Բաքվի զորքը, համառ մարտեր մղելով, նահանջում է Բաքու՝ իր հետ տանելով նաև Նուխի, Արեշ, Շամախի և Գյոքչա գավառների 50000-ից ավելի տեղահանված հայությանը: Ինչ վերաբերում է նահանջի ժամանակ հայ բնակչության կրած զոհերի թվին, ապա նշենք, որ միայն Շամախի-Մարագա հատվածում՝ մի խոր ձորում, շոգից, խուլերայից և ծարավից զոհվեցին 1000-ից ավելի գաղթականներ¹⁶⁵:

Բաքվում հանգրվանած գաղթականներն ապրում էին կիսաքաղց ու կիսամերկ՝ ամեն օր տասնյակ զոհեր տալով: «Նրանք (Գյոքչայի և Շամախու հայերը - Գ. Ս.) հաւաքել էին Բագու, և ինչպէս ձուկը տակառում, միմյանց վրայ թափած էին քաղաքի հրապարակներում ու եկեղեցիների բակերում ու դպրոցական մի քանի դատարկ շինություններում... Ուստի և ճանճի նման նրանցից օրական 30-40 հոգի մեռնում էին շարունակ»¹⁶⁶, - գրում է ականատես Եղիշե ավ. քին. Գեղամյանցը:

1918 թ. սեպտեմբերի 15-ին, երբ Նուրի փաշայի գլխավորությամբ թուրքական զորքերը գրավեցին Բաքուն և երեք օր շարունակ կոտորածի ենթարկեցին շուրջ 30.000 հայերի, կոտորածի առաջին զոհերի մեջ էին Հայկավանում ապաստանած արևմտահայ, նուխեցի, շամախեցի և գյոքչայեցի գաղթականները, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում հիվանդները և վիրավորները¹⁶⁷: Նրանցից ավելի քան 1500-ին կոտորեցին¹⁶⁸: Չոհված փախստականների մեջ մեծ թիվ էին կազմում հատկապես շամախեցիները¹⁶⁹: Գաղթականներից կարողացան փրկվել ընդամենը 3000 հոգի¹⁷⁰: Ականատեսի վկայությամբ. «Չուրկ միջոցներից և առողջութիւնից, նրանք (գաղթականները - Գ. Ս.) ի հարկե անկարող եղան փախչել քաղաքից, և ամենքը դարձան Մահմեդ Չուշի և Ջիվանշիրի զոհ»¹⁷¹:

Հարկ է նշել, որ Բաքվի նահանգում հայերի կոտորածները նախապես ծրագրված էին երիտթուրքերի և մուսավաթականների կողմից: Այս առումով ուշագրավ է հետևյալ փաստը. Բաքվի հայերի սեպտեմբերյան կոտորածների կազմակերպիչներից Ադրբեջանի Հանրապետության ներքին գործոց նախարար Բեհբուդ Խան-Ջիվանշիրի ահաբեկիչ Միսաք Թոռլաքյանի՝ Կ. Պոլսում 1921 թ. հոկտեմբերի 6-ին կայացած դատավարության¹⁷² ընթացքում դեպքերի ականատես, զորավար Սեպուհի (Արշակ Ներսիսյան) թիկնապահ Գրիգոր Ամիրյանը

163 Տե՛ս նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 6:

164 Տե՛ս Ռոստոմ, Մահուան վաթսուներանգակն առթիւ, Պէյրուք, 1979, էջ 385:

165 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 338, թ. 59, տե՛ս նաև «Արեւ», Բագու, 1918, հուլիսի 30, N 148:

166 Գեղամեանց Ե., Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը, պր. Բ, Բագու, 1919, էջ 137:

167 Տե՛ս «Դորիզոն», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 13, N 208:

168 Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները: Անկետային ուսումնասիրութիւն սեպտեմբերեան անցքերի 1918 թ., Թիֆլիս, 1920, էջ 32:

169 Տե՛ս «ժողովուրդ», Թիֆլիս, 1918, հոկտեմբերի 3, N 15:

170 Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1919, մարտի 4, N 48:

171 Նույն տեղում:

172 Կ. Պոլսում կայացած դատավարության ժամանակ անգլիական պատերազմական ատյանը (նախագահ՝ հազարապետ Ֆրիզպի) Ս. Թոռլաքյանին ճանաչել է մեղավոր, սակայն ազատ է արձակել «մտախանգարման» պատճառով (Տե՛ս Թոռլաքեան Ս., Օրերուս հետ, Գ հրատ., Պէյրուք, 2001, էջ 524-525):

հրապարակեց կոտորածներից առաջ Բ. Ջիվանշիրի կողմից Շամախու, Նուխիի, Արեշի և Բաքվի քաղաքայնություններին տրված գաղտնի հրամանը, որտեղ ասված էր. «Սրբազան պատերազմ մըն է այս, մղում՝ միացնելու համար բոլոր թուրք ցեղերը: Այս ի կատար ածելու համար անհրաժեշտ է, որ նախ հայ ցեղը բնաջնջուի: Հայերը խոչընդոտ կը հանդիսանան մեր քաղաքական ճամբուն վրայ, որ ուղղված է դեպի Հնդկաստան: Անհրաժեշտ է ոչնչացնել հայերը, անոնց դիակներու վրայէն անցնելով մեր նպատակներուն հասնելու համար: Մի խնայէք ոչ ոքի եւ հավատարմօրէն կատարեցէք ձեզի տրուած հրահանգները»¹⁷³:

Կոտորածներից փրկված Բաքվի հայության մի զգալի հատված հանգրվանեց Կրասնովոդսկում, Հյուսիսային Կովկասում, Անդրկասպյան երկրում և Պարսկաստանում: Շամախահայ գաղթականները հիմնականում հաստատվեցին Պարսկաստանի Ռաշտ քաղաքում, ուր անցկացրին տառապանքի ամիսներ: Ռաշտի գաղթականական մարմնի տեղեկագրի համաձայն՝ սովի, տարափոխիկ հիվանդությունների և զրկանքների հետևանքով 1918 թ. հոկտեմբերի սկզբներից մինչև դեկտեմբերի վերջը Ռաշտում մահացան շուրջ 125 շամախեցի գաղթականներ¹⁷⁴:

Շամախահայերը մեծ զրկանքներ կրեցին և կորուստներ ունեցան նաև 1918 թ. սեպտեմբերի վերջերին, երբ Բ. Խան-Ջիվանշիրի հրամանով կոտորածից փրկված գավառի շուրջ 6500-ի հասնող գաղթահայությանը բռնությամբ տեղափոխեցին գավառներ¹⁷⁵: Ճանապարհին գաղթականները ենթարկվեցին թաթար ավազակախմբերի, այդ թվում՝ տարագիրներին հսկող թուրք-թաթար զինվորների բռնություններին: Նրանց մեծ մասն այդպես էլ չհասավ վերջնակետին:

Շամախիի հայերի դեմ իրականացվող ֆիզիկական բնաջնջման և բռնի տեղահանման հանցավոր քաղաքականությունը շարունակվեց նաև 1919-1920 թթ.: Որքան էլ որ Ադրբեջանի պառլամենտը 1919 թ. սեպտեմբերի 6-ին ընդունել էր օրենք Ադրբեջանի քաղաքացիության վերաբերյալ, համաձայն որի. «Ազերբայջանի քաղաքացիներ համարում են՝ առանց ազգի և կրօնի խտրութեան՝ նախկին ռուսաց կայսրութեան այն բոլոր հպատակները, որոնք իրանք, կամ նրանց ծնողները ծնել են Ազերբայջանի Հանրապետութեան սահմաններում»¹⁷⁶, հայախալած քաղաքականությունը, բռնություններն ու կամայականությունները շարունակվեցին ողջ երկրում, այդ թվում՝ նաև Շամախի քաղաքում¹⁷⁷: «Աշխատաւոր» լրագիրն այդ օրերին գրում էր. «Ադրբեջանի կառավարութիւնը անշեղ կերպով իրենց համար ծրագրած ունեին ներկայ Ադրբեջանի տերիտորիան ազգայնացնելու...»¹⁷⁸: Նպատակ ունենալով Շամախիից դուրս մղել այդտեղ մնացած սակավաթիվ հայերին և բռնությամբ տիրանալ նրանց ունեցվածքին, Ադրբեջանի կառավարությունը որոշեց քաղաքի ներքին թաղում բնակվող թաթարներին վերաբնակեցնել վերին թաղում՝ հայկական թաղամասում, որն ավելի բարեկարգ վիճակում էր: Գ. Քաջբերունին այդ առիթով դառնությամբ գրում էր, որ եթե հայապատկան տները ընկնեն, «...անընդունակ, երբէք այգու երես չտեսած, երկյարկանի տներում չապրած, գոմէշների ու ոչխարների հետ կեանք

173 Յեղափոխական ակպոմ: Ազատագրական պայքարի յուշամատեն. Միսաք Թորլաքեան, գրեց՝ Աւօ, հ. 8, թիւ 1-4, Պէյրուք, 1970, էջ 84-85:

174 Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները, էջ 96-97, տե՛ս նաև Ստեփանյան Գ., Բաքվի անկումը և հայերի գաղթը Պարսկաստան (1918 սեպտեմբեր-1919 մարտ), «Իրան-նամե», եր., 2000, հ. 35, էջ 58-62:

175 Տե՛ս ՅԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 193, թ. 3:

176 Ազերբայջանի քաղաքացիութեան (հպատակութեան) օրէնքը, Բագու, 1919, էջ 3:

177 Տե՛ս «Наше время», Баку, 1919, 25 апреля, N 75.

178 «Աշխատաւոր», Թիֆլիս, 1919, նոյեմբերիի 28, N 253:

Աղստի շրջանում հայ բնակչության թիվը կազմում էր 2227, Իսմայիլիի շրջանում՝ 4038 և Շամախու շրջանում՝ 6497 մարդ¹⁸⁷, ապա 1970 թ. Աղստի գյուղական շրջանում հայ բնակչության թիվը 1654, Իսմայիլի շրջանում՝ 3308 և Շամախու շրջանում՝ 5166 մարդ էր¹⁸⁸: 1986 թ. դրությամբ Շամախի քաղաքում հայերն ունեին ընդամենը 60 տուն՝ 200 բնակիչ¹⁸⁹: Շամախիում հայ բնակչությանն իրավազրկելու, հալածելու և էթնիկ գտման քաղաքականությունը շարունակվեց մինչև 1988 թ., որին հաջորդեց 1989 թվականին հուլիսին տեղի ունեցած՝ հայերի վերջին հատվածի բռնագաղթը: Բռնագաղթի նախօրեին Շամախին ուներ մոտ 110-120 (մոտ 70 տուն) հայ բնակիչ¹⁹⁰:

Այսպիսով, 1900-1989 թթ. Շամախի քաղաքի հայ բնակչության շարժընթացն ուներ հետևյալ պատկերը.

Տարեթիվ	Ծուխ	ար.	իգ.	Բնակչ. ընդ. թիվը
1900	-	2066	2026	4092
1902	350	-	-	-
1904	-	927	806	1733
1905	200	-	-	-
1909	300	898	858	1756
1912	315	2342	2186	4528
1914	-	2288	2172	4460
1916	-	2314	2220	4534
1926	-	-	-	192
1986	60	-	-	200
1989	70	-	-	210-220

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի վիճակագրական տվյալները, էթնիկ գտումների ու հալածական քաղաքականության պատճառով հայերը Շամախիում իրենց գոյությունը պահպանելու, հայ մնալու ոչ մի հեռանկար չունեին: Այս բռնագաղթից հետո շամախահայերի դատարկ տներում Ադրբեջանի իշխանությունները վերաբնակեցրին մեծ թվով ադրբեջանցի գաղթականների: Դրանով ավարտվեց Շամախի քաղաքի հայության մաքառումներով և հերոսապատումներով լի պատմությունը:

Այսպիսով, սուկ 20-րդ դարի սկզբներին Արևելյան Այսրկովկասում ձևավորված «Ադրբեջան» արհեստածին պետությունը հայրենի օջախներից փուլ առ փուլ դուրս մղեց երկրամասի զարգացման ու առաջընթացի մեջ վճռորոշ դեր խաղացած Շամախի քաղաքի հայությանը՝ բռնագաղթելով ժամանակի ընթացքում նրա ստեղծած նյութական ու հոգևոր արժեքները:

187 Տե՛ս Ավագյան Գ., Հայերն Ադրբեջանում ապրելու հեռանկար չունեին, «Գարուն», Եր., 2001, N 4, էջ 36:

188 Տե՛ս Ավագյան Գ., Հայկական ՍՍՀ բնակչությունը (տնտեսա-աշխարհագրական ուսումնասիրություն), Եր., 1975, էջ 60:

189 Կարապետյան Ա., Բուն Աղվանքի հայերեն վիճագրերը, Եր., 1997, էջ 57:

190 Ադրբեջանից 1988-1990 թթ. տեղահանված և Հայաստանի Հանրապետությունում հաստատված Շամախի և հարակից գյուղերի (Քարքանց, Մեյսարի և այլն) հայերի շրջանում 2009 թ. նոյեմբերին մեր իրականացրած ազգագրական նյութի հավաքման դաշտային աշխատանքների ժամանակ, բռնագաղթի նախօրեին Շամախիի հայ բնակչության թվաքանակի մասին այս տվյալները մեզ է հաղորդել Սիսիանի շրջանի Որոտան գյուղում բնակվող շամախեցի 54-ամյա Սարգիս Միքայելի Օհանյանը:

Summary

**SHAMAKHI AND THE SHAMAKHI'S ARMENIANS
(from ancient times up to the end of the 20th century)**

Gevorg S. Stepanyan

Since immemorial times the oldest city of Eastern Transcaucasia Shamakhi had been inhabited by Armenians, according to rich bibliographic and archive materials. A part of them considered it to be their native land. Local Armenians had as unified, social-economic and spiritual-cultural active life full of high level creative and scientific-cultural work, as well as played significant role in the region's development. Armenians presented an enlightened and viable element in the backward environment of the alien Turkic speaking population.

Frequent catastrophic earthquakes had negative impact on the natural growth of the Armenian population of Shamakhi. As a result of a destructive earthquake (May, 1859) in Shamakhi the provincial central administration was removed to Baku, thus Shamakhi lost gradually its former glory. The Armenians of Shamakhi suffered hard period especially in 1918. During their aggression against Baku the Turkish troops occupied Shamakhi (July 20) and massacred, forcibly Islamized and deproted the Armenian population of the city. The policy of repressions, deportations and ethnic cleansing committed against Armenians had been continued in the years of Musavatist Azerbaijan and the Soviet power, which followed the latter. In 1989 as a result of deportation Shamakhi was finally deprived of its Armenian population.

Թիվ 3 (28) հոկտեմբեր-դեկտեմբեր 2009

ՀԵՄ համահայկական հանդես